# ԿԱՅՍՐ ՎԻԼՀԵԼՄ II-Ի ՃԱՌԸ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պարոններ, ես ձեզ իմ բոլոր սրտով բարեւում եմ և շնորհակալութիւն եմ յայտնում անձնապէս պ. մինիստրին, որ նա, չը նայած ամեն տեսակ գործերով ծանրաբեռնուած լինելուն, յանձն է առել այս ժողովի նախագահութիւնը վարել։ Ես համոզուած եմ որ ոչ ոք այնքան չէ կոչուած և այնքան ճարպիկ չէ՝ մի այսպիսի խնդիր ճիշդ ղեկավարել և նորա լուծմանը նպաստել, որքան լուսաւորութեան մեր մինիստրը, որի մասին ես միանգամայն և առանց չափազանցման կարող եմ ասել, որ գերմանական պետութիւնը և պրուսական թագաւորութիւնը շատ տարիներ չի ունեցած մի այնքան քաջ, անձնուէր և նշանաւոր մինիստր լուսաւորութեան, որպիսին նա է. Ես յոյս ունիմ որ կը յաջողուի ձեր օգնութեամբ գործը ոչ միայն առաջացնել. այլ և մինչ վերջը տանել։

Նիստը սկսելով, կայսր Վիլհելմ կրկին խօսք վերցրեց և մի երկար ճառում հետեւեալն ասաց.

Պարոններ, ես կամեցայ նախ ձեզ մի երկու խօսք ասել, որովհետև կարեւոր եմ համարում որ պարոնները առաջուց իսկ իմանան, թէ ինչպէս եմ ես մտածում խնդրի վերայ։ Հաստատ է որ շատ բան վիճաբանութեան է ենթարկելու առանց վճռի հասնելու, և ես կարծում եմ, որ մի քանի կէտեր մթութեան մէջ են մնալու։ Այդ պատճառով ես լաւ համարեցի՝ պարոններին կասկածի մէջ չը թողնելու, որ այստեղ ամենից առաջ ոչ թէ քաղաքական դպրոցական խնդրի մասին է գործը, այլ լոկ տեխնիքական և մանկավարժական միջոցների մասին, որ մենք պէտք է ձեռք առնենք՝ մեր նորահաս երիտասարդութիւնը կրթենք համեմատ այժմեայ պահանջներին, մեր հայրենիքի դիրքին աշխարհիս մէջ և մեր կեանքին։ Եւ այստեղ իսկ պէտք է մի բան նկատեմ։ Ես շատ կ'ուրախանայի եթէ մենք այս քննութիւնները, այս վիճաբանութիւնները անուանենք ոչ թէ ֆրանսիական schulenquête (խուզարկութիւն դպրոցների մասին), այլ գերմանական schulfrage (դպրոցական խնդիր) խօսքով։ Ֆրագէ (խնդիր) հին գերմանական խօսքն է սկզբնական հետազօտութեան (խու-

զարկութեան) համար, և ես պէտք է ասեմ, որ այս էլ դեռ աւել կամ պակաս մի նախնական հետազօտութիւն է։ Ուրեմն ուղղակի ասենք «Դպրոցական խնդիր»։ Ես կարդացի բոլոր 14 հարցերը և գտնում եմ որ նոքա շատ հեշտութեամբ կարող են գայթակղել դէպի հեռականութիւնը։ Այդ ես շատ կը ցաւէի։ Գլխաւորը այն է որ գործի ոգին ըմբռնուէր և ոչ միայն նորա ձևը։ Եւ ես իմ կողմից մի քանի հարցեր եմ գրել որ ես ձեր մէջ կը պտըտեցնեմ և ես յոյս ունիմ որ ձեր ուշադրութիւնը կը գրաւեն։ Ամենից առաջ «դպրոցական առողջաբանութիւնը բացի մարմնամարզութիւնից», ահա մի բան, որը շատ ճշդութեամբ պէտք է քննուի։ Յետոյ՝ «դասաւանդելի նիւթի պակասացնումը» յետոյ՝ «առանձին առարկաների դասաւանդութեան ծրագիրները», և յետոյ՝ «դասաւանդութեան մեթոդը կազմակերպութեան համար (Lehrmetho, de für die Organisatlon), մի խօսք, որի իմաստը դժւար ըմբռնելի է թւում մեզ. ծանօթ. խմբ.)—ահա գլխաւոր կէտերը։ Վեցերորդն է «Քննութիւններից գլխաւոր բեռը հեռացրած է արդեօք?, և եօթներորդ՝ «ծանրաբեռնումը ապագայում թեթեւացնել», ութերորդ՝ «ինչպէս պէտք է կազմակերպել վերահսկողութիւնը, երբ գործը գլուխ բերւած կը լինի»։ իններորդ՝ «կանոնաւոր և արտակարգ րեւիզիաները այլ և այլ բարձր վարչական իշխանութիւնների կողմից»։

«Ես դնում եմ այս հարցերը ժողովի սեղանի վերայ, ով կամենում է՝ կարող է դոցա մասին տեղեկանալ։ Ամբողջ խնդիրը, պարոններ, կամաց-կամաց ինքն իրան զարգացաւ. դուք կանգնած էք այստեղ մի բանի դիմաց, որի մասին ես հաստատ համոզւած եմ, որ դուք այն կատարելութիւնով, որ կը տաք գործին, այն ձևով, որ դուք կը դրոշմէք նրան, արդէն որպէս հասուն պտուղ ազգին կը դարձնէք.

Դուցէ հարկաւորութիւն չը լինէր այն կաբինետային հրամանը տալ, որ պր. մինիստրը բարի եղաւ քիչ առաջ յիշատակել, եթէ ուսումնարանը այն տեսակէտի կանգնած լինի, որի վերայ նա պէտք է կանգնած լինէր։ Ես պէտք է առաջուց իսկ նկատեմ, որ եթէ ես մի փոքր խիստ պէտք է լինեմ, այդ ոչ ոքին անձնապէս չը պէտք է վերաբերուի, այլ միայն սիստեմին, ընդհանուր դրութեանը։ Եթէ ուսումնարանը կատարած լինէր այն, ինչ նորանից պահանջելի է,—և ես կարող եմ իբրև գործին տեղեակ խօսել, որովհետև ես ևս գիմնազիայում նստած եմ եղել և ես գիտեմ թէ ինչ է կատարւում այնտեղ—նա հէնց սկզբից իւր կռիւը սկսած կը լինէր սոցիալ-դեմոկրատիայի դէմ։ Ուսուցչական խմբերը իրար հետ միասին գործին պինդ կպած կը լինէին և դեռահաս երիտասարդութիւնը այնպէս կրթած կը լինէին, որ այն երիտասարդները, որոնք մօտաւորապէս ինձ հասակակից են, ուրեմն շուրջ 30 տարեկան—ինքն ըստ ինքեան կազմած կը լինէին այն դասակարգը, որի հետ ես պետութեան մէջ կ'աշխատէի՝ վտանգաւոր շարժման դէմ առնելու համար։ Բայց այդ այդպէս չի եղած։ Ամենավերջին րոպէն, ուր մեր դպրոցը մեր ամբողջ հայրենական կեանքի և մեր

զարգացման համար կարևոր է եղած, այդ րոպէն եղած է 1864, 1866 և
1870 Թուականներին։ Այն ժամանակ պրուսական ուսումնարանները, պրու-
սական ուսուցչական կոլլեգիաները կրողներն էին միութեան գաղափարի,
որը ամեն տեղ քարոզւում էր։ Ամեն մի աւարտող, որ դպրոցից դուրս էր
գալիս և իբր զինուոր կամ կեանքի մէջ էր մանում, ամենը համաձայն էր
այս մէկ կէտում՝ գերմանական պետութիւնը կրկին կը վերականգնուի և
Էլզաս-Լոթարինգեան կրկին ձեռք կը բերուի։ 1871 Թուականով գործը գա-
զարեց. պետութիւնը այժմ միացած է, մենք ունինք արդէն ինչ ձգտում էինք
ձեռք բերել, իսկ գործը մնաց կանգնած։ Այժմ պէտք է որ ուսումնարանը,
նոր ձեռք բերուած հիմունքից դուրս գալով, երիտասարդութիւնը ղեկա-
վարէ և նրան պարզէ, որ այդ նոր պետութիւնը ստեղծւած է պահ-
պանելու համար։ Բայց բանը մոռացութեան էր տրուած. և այժմ, այս
կարճ միջոցում, որ գերմանական պետութիւնը գոյութիւն ունի, կենտրո-
նախոյս տենդենցներ են զարգանում։ Ես այդ մասին անկասկած դատել
կարող եմ, որովհետև ես վերև եմ կանգնած և բոլոր այդ խնդիրները ինձ
են հասնում։ Պատճառը պէտք է որոնել երիտասարդութեան կրթութեան
մէջ։ Ինչն է պակաս։ Պակասութիւնները մի քանի տեղ են։ Գլխաւոր
պատճառը նորա մէջն է, որ 1870-ից դէս լեզուագէտները որպէս beati
passidentes գիմնազում նստել են և գլխաւորապէս կշիռը դրել են ուսա-
նելու նիւթի, ուսանելու և գիտութեան վերայ, բայց ոչ բնաւորու-
թիւնը կրթելու և այժմեայ կեանքի կարիքների վերայ։
Դուք, պարոն գաղտնի խորհրդական Հինցպետեր, կը ներէք, դուք մի ոգե-
ւորուած լեզուագէտ էք. բայց չը նայած դորան, խնդիրը իմ կարծիքով այն
աստիճանի է հասել, որ վերջ ի վերջոյ բանը այսպէս գնալ չի կարող։
Մինչ այժմ աւելի քիչ է կշիռ դրուած կարողանալու քան գիտե-
նալու վերայ։ Այդ երևում է նաև այն պահանջներից, որ անւում են
քննութիւնների ժամանակ։ Պահանջում են, որ աշակերտը որքան կարելի
է շատ գիտենայ. Թէ նա կեանքի համար հարկաւոր է Թէ ոչ՝ դա երկրոր-
դականն է։ Երբ ասում են, որ երիտասարդը քիչ է նախապատրաստւել
գործնական կեանքի և նորա պահանջների համար, դորան միշտ պատաս-
խանում են Թէ այդ դպրոցի գործը չէ և որ գլխաւորը ոգու կրթութեան մէջն
է, որով նա կարող է կեանքի մէջ հարկաւորը կատարել։ Ես կարծում եմ
որ այս ուղղութեամբ այլ ևս չի կարելի գնալ։

Դառնալով այժմ դպրոցին և մասնաւորապէս գիմնազին, ես շատ
լաւ հասկանում եմ, որ շատ շրջաններում ինձ ընդունում են որպէս մոլե-
ռանդ հակառակորդ գիմնազիին և որ ինձ ներկայացրել են որպէս միւս
դպրոցների բարեկամ։ Պարոններ, դա ճիշդ չէ։ Ով ինքը գիմնազում եղել
է և կուլիսների յետևը նայել է, նա գիտէ Թէ պակասութիւնը ինչումն է։
Եւ պակասութիւնը ամենից առաջ նորանումն է, որ ուսումնարանը
զուրկ է ազգային հիմունքից։ Մենք պէտք է որպէս հիմք գիմ-

նալի համար գերմաներէնը ընդունենք, մենք պէտք է ազգային երիտասարդ գերմանացիք կրթենք և ոչ երիտասարդ յոյներ ու հռովմայեցիք։ Մենք պէտք է թողնենք այն տեսակէտը, որ հարիւրաւոր տարիներ գոյութիւն է ունեցել. այն միջնադարեան հին վանական կրթութիւնը, ուր լատիներէնը գլխաւորն էր և մի քիչ էլ յունարէնը։ Այժմ դա այլ ևս կարեւոր չէ. մենք պէտք է գերմաներէնը հիմք դարձնենք։ Գերմաներէն գրաւոր խնդիրը պէտք է դառնայ այն միջին կէտը, որի շուրջը ամեն ինչ պտտում է։ Եթէ մէկը վերջնական քննութեան ժամանակ մի անսխալ գերմաներէն յօդուած է տալիս, դորանից կարելի է ճանաչել երիտասարդի ոգեկրթութեան չափը և դատել թէ նա արդեօք մի բանի պէտք է թէ ոչ։

Իհարկէ դորա դէմ ասում են՝ լատիներէնի խնդիրը նմանապէս ատ կարեւոր է, լատիներէնի խնդիրը շատ լաւ է մէկին օտար լեզուի մէջ վարժելու համար և այլն։ Այո, պարոններ, այդ ես էլ փորձել եմ։ Ինչպէս է գոյանում մի այդպիսի լատիներէն գրաւոր աշխատանք։ Ես շատ յաճախ տեսել եմ, որ մի պատանի գերմաներէն աշխատութեան մէջ—ասենք № 4 ընդհանրապէս բաւարար և լատիներէնում № 2 թւանշան է ստանում։ Այդ մարդը արժանի էր պատժի փոխանակ գովեստի, որովհետև նա լատիներէնը լաւ ճանապարհով գլուխ չը բերաւ, այդ պարզ է։ Եւ այն բոլոր լատիներէն աշխատանքները որ մենք գրել ենք, 12-ից հազիւ երկուսը այդ միջոցներով չեն գլուխ եկել։ Այդպիսի աշխատանքները նշանակւում էին որպէս «լաւ»։ Եւ դա կոչւում էր լատիներէն աշխատանք։ Բայց երբ մենք գիմնազում մի աշխատանք պիտի գրէինք (Լեսսինգի) «Բարնհելմցի Միննա»-ի մասին, մենք հազիւ «բաւարար» թւանշան էինք ստանում։ Այդ պատճառով էլ ասում եմ ես՝ դէնը լատիներէն աշխատանքը. նա խանգարում է մեզ և մենք ժամանակ ենք կորցնում ի վնաս գերմաներէնի։

Նոյնպէս կը կամենայի ես ազգայինը աւելի զարգացրած տեսնել պատմութեան, աշխարհագրութեան և ժողովրդական զրոյցների (Sage) խնդիրներում։ Սկսենք մօտիկից։ Միմիայն երբ մենք մեր տան այլ և այլ սենեակների և բաժանմունքների հետ ծանօթ ենք, կարող ենք թանգարանը գնալ և այնտեղ ես շուրջ նայել։ Բայց ամենից առաջ մենք մեր պատմութիւնը պէտք է իմանանք։ Մեծն Կուրֆիւրստը (այժմեան պրուսական թագաւորի նախահայրերից մէկը 17 դարում, որից սկսեց Պրուսիայի առաջադիմութիւնը, ծան. խմբ.) իմ աշակերտական տարիներում մթութեան մէջ ծածկւած մի անձնաւորութիւն էր, եօթնամեայ պատերազմը արդէն խորհրդածութիւնների առարկայ չէր և պատմութիւնը վերջանում էր Ֆրանսիական յեղափոխութիւնով։ Ազատութեան պատերազմները (պատերազմները Նապոլէոն I-ի դէմ, 1813 թ., ծանօթ. խմբ.), որ ամենակարեւորն են այժմեայ պետական քաղաքացու համար, չէին անցնում, և

միայն պր. գաղանի խորհրդական Հինցպետրի լրացուցիչ և հետաքրքրական պատասխաններովը միայն ես, փառք Աստուծոյ, կարողացայ այդ բաներից տեղեկանալ։ Եւ հէնց դորա մէջն է Punctum saliens. ինչու մեր երիտասարդները գայթակղւում են (դէպի սոցիալ-դեմոկրատիան)։ Ինչու այդքան անորոշ, մտամոլոր երիտասարդներ կան, որոնք ամենքը ուզում են աշխարհքը դրստել։ Ինչու են միշտ մեր կառավարութեան վերայ մրթմրթում և արտասահմանի վերայ մատնանիշ լինում։ Որովհետև մեր երիտասարդները չը գիտեն թէ ինչպէս են գոյացել մեր հանգամանքները և թէ պատճառները ֆրանսիական 1789 թւականի յեղափոխութեան մէջն են։ Այդ իսկ պատճառով ես այս հաստատ համոզմունքին եմ, որ եթէ ժամանակը ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից դէպի 19 երորդ դարը պատանիներին պարզ ենք պարզ և օբյեկտիւ ու ընդհանուր գծերով, այն ժամանակ նոքա բոլորովին ուրիշ հասկացողութիւն կ'ունենան այժմեայ հանգամանքների մասին, քան մինչ այժմ էր։ Այն ժամանակ նոքա կարող են համալսարանում պակասը լրացնել։

Գալով այժմ մեր երիտասարդների պարապմունքներին, միանգամայն անհրաժեշտ է դասերի թիւը պակասեցնել։ Պր. գաղանի խորհրդական Հինցպետրը կը վկայէ որ երբ ես Կասսելի գիմնազիումում էի, ծնողների և ընտանիքների առաջին գանգատը այն էր որ այդպէս բանը շարունակել անկարելի է։ Դորա հետևանքն էր, որ կառավարութիւնը միջամտեց, մենք պարտաւորեցինք ամեն առաւօտ մեր դիրեկտոր Ֆոգտին ցոյց տալ մեր տնային պարապմունքների ժամերը, որ մեզ հարկաւոր էին որ մենք մեզ տուած դասերը սովորէինք։ Դէ, պարոններ, դուրս էր գալիս որ մենք $5^1/_2$, $6^1/_2$ մինչ 7 ժամ տնային պարապմունքներ ունէինք։ Դոքա աւարտողներ էին. Հաշւեցէք դորա հետ միասին 6 ժամ դասեր դպրոցում, երկու ժամ ճաշելը, և դուք հաշւեցէք հիմա թէ օրից ինչ էր մնում։ Եթէ ես առիթ չունենայի դուրսը ձիով դէս ու դէն գնալ և այլ ազատութիւններ ունենալ, ես սկի չէի իմանալ թէ աշխարհքիս տեսքը ինչպէս է։ Ինչ և իցէ դոքա ծանրութիւններ են, որ շարունակ չի կարելի պատանիների վերայ բեռնաւորել։

Պարոններ, այդպէս շարունակել չի կարելի, աղեղը աւելի լարել չը պէտք է, և ոչ էլ այդպէս լարուած պահել։ Այդ բանում մենք արդէն վերջին ծայրը անցել ենք։ Դպրոցները—և ես ուզում եմ այստեղ գիմնազների մասին խօսել—գերմարդկայինը են կատարել, և իմ կարծիքով ուսեալներ աւելի են դուրս բերել, քան ազգը տանել կարող է և աւելի, քան իրանք ուսեալները կարող են տանել։ Ճիշտ է իշխան Բիսմարկի այս խօսքը՝ «աւարտածների պրոլետարիատ», որ մենք ունինք։ Բաղցածութեան բոլոր կանդիդատները, մանաւանդ պարոն ժուրնալիստները, դոքա շատ անգամ աւերուած գիմնազիստներ են, և դա մի վտանգ է մեզ համար։ Այդ աւելորդը պէտք է հեռացնել։ Այդ պատճառով ես այսուհետև

ոչ մի նոր գիմնազի համար թոյլտուութիւն չեմ տալու, մինչև որ նորա անհրաժեշտութիւնը ցոյց չը տրւի։ Մենք արդէն բաւական ունինք։

Այժմ հարցնում է թէ ինչպէս կարելի է բաւարարութիւն տալ կլասիքական կրթութեան և րէալական կրթութեան ու միամիայ կամաւոր զինւորական ծառայութեան պահանջներին։ Ես կարծում եմ որ բանը շատ պարզ կերպով այնպէս կարելի է վճռել, իբր մի արմատական քայլով ցայժմեայ հայեացքները պարզենք. ասելով կ լ ա ս ի ք ա կ ա ն գ ի մ ն ա զ ն ե ր կ լ ա ս ի ք ա կ ա ն կ ր թ ո ւ թ ի ւ ն ո վ, մ ի ե ր կ ր ո ր դ տ ե ս ա կ ո ւ ս ո ւ մ ն ա ր ա ն ն ե ր ր է ա լ ա կ ա ն ո ւ ս ո ւ մ ո վ, բ ա յ ց ո չ ր է ա լ ա կ ա ն գ ի մ ն ա զ ն ե ր։ Րէալական գիմնազները կիսատութիւն են ներկայացնում, նորանով մարդ հասնում է կիսատ կրթութեան, և ամբողջը տալիս է կիսատութիւն յետոյեայ կեանքի համար։

Շատ իրաւացի են գիմնազների դիրեկտորների գանգատները աշակերտների այս ահագին քանակութեան մասին, որը երբէք չի հասնում քննութեան և որը միայն իրաւունք է ուզում ձեռք բերել մի տարի իբր զինւոր ծառայելու։ Ուրեմն այստեղ գործին օգնած կը լինենք, եթէ քննութիւն պահանջենք իբր միամեայ ծառայողը ուսումնարանը թողնում է, և նորա իրաւունքը կախւած լինի նորանից, որ իբր նա րէալական ուսումնարանն է յաճախում՝ ցոյց տայ աւարտման վկայականը։ Այն ժամանակ մենք վկայ կը լինենք հոսանքին՝ գիմնազներից դէպի րէալական ուսումնարանները։ Որովհետև եթէ սոքա րէալականը կը յաճախեն, նոքա, այդ միմեայն ծառայութեան կանդիդատները կունենան այն ինչ որոնում են։

Դորա հետ ես կապում եմ մի երկրորդ կէտ, որ ես վերը յիշատակեցի՝ աւանդելի նիւթի պակասացնելը, որը կարելի է քննութիւնները աւելի պարզ դարձնելով։ Քերականական պահանջները բոլորովին դուրս գցենք վերջնական քննութիւններից և դնենք մի կամ երկու դասատնով աւելի ներքև 'և թոյլ տուէք որ այդտեղ մի տեխնիքական-քերականական քննութիւն լինի, այն ժամանակ քննեցէք նրանց որքան կամենաք խիստ. յետոյ կարող էք այդ քննութեան հետ կապել միմիայն ծարաողների քննութիւնը, իսկ ով ուզում է օֆիցեր դառնալ՝ նա կը տայ նաև ֆեհնրիխի քննութիւնը, այնպէս որ նա յետոյ այլ ևս այդ քննութիւնը տալու հարկաւորութիւն չի ունենայ։

Երբ քննութիւնները այս ձևով թեթևացրած կը լինենք, այն ժամանակ կրկին այն մոմենտը որ ուսումնարանում և մասնաւորապէս գիմնազում կորած էր՝ դաստիարակութիւնը, բնաւորութեան կրթութիւնը։ Այդ մենք այժմ չենք կարող ամենալաւ ցանկութեամբ անգամ, երբ դասարանում 30 երեխայ է նստած, որոնք այնքան շատ դասեր ունեն և ուր յաճախ դաս են տալիս երիտասարդներ, որոնք դեռ իրանք կարօտ են բնաւորութեան զարգանալուն։ Ես այստեղ կը կրկնեմ պր. գաղտնի խորհրդական Հենցպիտերի խօսքը, որ ես լսել եմ նրանից՝ «ով ուզում է

կրթել, ինքը պէտք է կրթուած լինի։ Այդ չի կարելի մեր այժմեայ ամբողջ ուսուցչական պերսոնալի մասին ասել։ Դաստիարակութիւնը կարելի դարձնելու համար պէտք է աշակերտների թիւը պակասացնել։ Այդ կարելի է իմ ցոյց տուած ճանապարհով։ Դասեր տալով՝ ուսուցիչը իւր պարտքը չը լրացրեց։ Երբ ուսումնարանը այնքան ժամերով խլում է երեխային ընտանիքից, այն ժամանակ նա պէտք է նաև դաստիարակութեան պատասխանատուութիւնը իւր վերայ առնէ։ Դաստիարակեցէք երիտասարդութիւնը և այնժամանակ ուրիշ տեսակ աւարտողներ կ'ունենանք։ Յետոյ պէտք է թողնել այս սկզբունքը, թէ իբր բանը գիտենալու մէջն է և ոչ կեանքի մէջ։ Զայէլ տղերքը պէտք է այժմեայ գործնական կեանքի համար պատրաստուեն։ Պրուսիայում կան 108 գիմնազներ և պրոգիմնազներ 80,979 աշակերտներով, րէալական գիմնազներ և րէալական պրոգիմնազներ՝ 172 հատ 34,465 աշակերտներով, լատիներէնից զուրկ բարձր րէալական ուսումնարանները 60 հատ 19,893 աշակերտներով։ Այդ բոլորից գիմնազներում ձեռք բերին միմիայն ծառայութեան իրաւունք 68 տոկոս, րէալական գիմնազներում 75 տոկոս և լատիներէնից զուրկ րէալական ուսումնարաններում 38 տոկոս։ Հասունութեան վկայականներ (վերջնական քննութիւններով) ստացած գիմնազներում 31 տոկոս, րէալական գիմնազներում 12 տոկոս, բարձր րէալական ուսումնարաններում 2 տոկոս։ Այդ դպրոցների ամեն մի աշակերտ ունի չուրջ 25,000 դպրոցական և տնային աշխատութիւններ և չուրջ 657 ժամ ունի ազատ, որի մէջ և մարմնամարզութեան դասեր կան։ Սա ոգեկան աշխատանքի մի չափազանցութիւն է, որ միանգամայն պէտք է պակասեցնել! Տասներկու, 13 և 14 տարեկան երեխաները չորորդում և երրորդում, հաշուած նաև մարմնամարզութիւնը և երգեցողութիւնը, շաբաթական 32 ժամ պարապմունք ունին, մի քանի դպրոցներում 35, և րէալական գիմնազի երրորդում ասելն ու գրելը 37 ժամ է պահանջում։ Դէհ, պարոններ, մենք ամենքս չատ թէ քիչ հասունացած ենք և տեսղապէս մենք էլ չենք կարող այդքան դիմանալ։ Վիճակագրական տեղեկութիւնները դպրոցական հիւանդութիւնների տարածման մասին, մանաւանդ աշակերտների կարճատեսութիւնը, իսկ որ սարսափելի են, և դեռ մի քանի հիւանդութիւնների մասին վիճակագրական թւերը պակաս են։ Մտածեցէք, պարոններ թէ այդ ինչ նշանակութիւն ունի երկիրը պաշտպանելու (զօրքի) համար! Ես զինւորներ եմ որոնում, մենք պէտք է մի առողջ սերունդ ունենանք, որը որպէս ոգեկան առաջնորդներ և պաշտօնեաներ նմանապէս հայրենիքին են ծառայում։ Այսքան կարճատեսներից մեծ մասը անպէտք են։ Մի մարդ, որ իւր աչքերից չի կարող օգտուել, ինչպէս կարող է յետոյ չատ բան չինել։ Վերջին դասատան մէջ կարճատեսների թիւը մի քանի տեղերում հասնում է 74 տոկոսի։ Ես կարող եմ սեպհական փորձից ասել որ մենք, թէև Կասսելում չատ լաւ սենեակ ունէինք, ուսուցչական սենեակը միա-

կողմանի սիրուն լուսով և լաւ վենտիլացիայով, որը իմ մօր ցանկութեամբ բերուած էր, այնուամենայնիւ 21 աշակերտներից 18-ը ակնոցներ ունէին, որոնցից երկուսը ակնոցներով մինչ սեղանը տեսնել չէին կարողանում: Այս բաները իրանք իրանց դատապարտում են: Պէտք է միջամտել: Պէտք է առողջաբանութիւնը նախապատրաստական հիմնարկութիւններում ուսուցիչների համար աւանդուի, ուսուցիչները պէտք է դորա մէջ կուրս անցնեն և ամեն մի վարժապետին պէտք է պայման դնուի՝ որ ամեն վարժապետ, որ առողջ է՝ պէտք է մարմնամարզութիւն գիտենայ և նա պէտք է ամեն օր մարմնամարզութիւն անի:

Պարոններ, սոքա են այն ընդհանուր տեսակէտները, որ ես ձեզ պէտք է լուսաբանեմ. դոքա բաներ են, որ իմ սիրտը ցուցել են, և ես կարող եմ ձեզ հաւատացնել՝ այն մեծաքանակ գրութիւնները, ցանկութիւնները և խնդիրքները որ ես ծնողներից ստացել եմ, ինձ՝ որպէս երկրիս ընդհանուր հօր վերայ պարտականութիւն են դնում կատարարելու որ այսպէս չի կարելի բանը շարունակել: Պարոններ, տղամարդիկ չը պէտք է ակնոցներով աշխարհքս դիտեն, այլ սեպհական աչքերով և պէտք է հաճոյք զգան այն բանից ինչ իրանց առջին է՝ իրանց հայրենիքից և սորա հաստատութիւններից: Այդ բանին դուք պէտք է այժմ օգնէք:

---